

Խաշատրյանի գործերու հետ ծանոթանալու ծարավեն տոշորող մեր բազմահմուտ և մեծատաղանդ երաժշտագետը անմիջապես անցավ հաշնամուրի առջև և սկսավ արտակարգ վարպետությամբ նվազել կտորներ, մոտավորապես երեք քառորդ ժամ։ Մեր հանդիպումը վերածվեցավ խաշատրյանի երեկոյին, անմռուանալի երեկո մը իրավամբ։

Ապա մենք բաժնվեցանք, դարձյալ իրարու հանդիպելու և անգամ մը ևս Արամ Խաչատրյանի «Երշանկություն» և «Գայանե» պալեթներու կտորները Ալեքսանդր ճարտար կատարումով վայելելու որոշումով։

Ա. ԳՈՒՐԳԵՆ

(«Արամ» 30 սեպտեմբեր, 1947 թ.)

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ՀԱՄԵՐԴՆԵՐԸ ՅԱՖԱՅԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԵԶ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 21 հոկտեմբերի。— Ասկէ առաջ գրած էի արդեն տաղանդավոր արվեստագետ Պ. Համբարձում Պերպերյանի երուսաղեմ ժամանումին և տեղվույս ու Յաֆայի մեջ տալիք համերգներու մասին։

Սուային համերգը տրվեցավ Յաֆայի մեջ, հոկտեմբերի 2-ին, միայն երգչախումբով, որ կազմված էր երուսաղեմի մեջ և արժանացավ մեծ հաջողակթյան։ Տասը խմբերգեն հինգը ներկաներու որոտընդուստ ծափերուն մեջ կրկնվեցան։

Երկրորդ համերգը տրվեցավ հոկտեմբերի 19-ին երուսաղեմի Սինեմա թիվի սրածին մեջ՝ մասնակցությամբ նվազախումբի, Կոռվանալիորեր Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայոք։

Հայտագիրը նման էր նախորդին, միայն ավելացած էր Համբարձում Պերպերյանի հորինած «Եկեղեցին Հայկական»-ը (բանաստեղծություն Վահան Թերելյանի), որ իսկապես դժվարին կտոր մըն էր և որ հրամցուեցավ մեծ հաջողությամբ։ Սույն երգին իրենց սոլոներով մասնակցեցան օրիորդ Շաքե Սեմերյան (սորբանո), օրիորդ Սլյասարել Գասպարյան (ալթո), Պ. Ժիրայր Խուռավագայան (թենոր) և Պ. Սահակ Գալայան (պասո)։ Ասոնցմեն զատ դաշնակի ընկերակա-

ցությամբ մեներգեցին օրիորդ Արուսյակ Պատաճյան (սորբանո), օրիորդ Ա. Սողոմոնյան (սորբանո), Պ. Նարդան Մաքիկոնյան (թենոր) և Պ. Ս. Գրիգորյան (թենոր)։ Խմբերգերեն կրկնվեցան Կոմիտաս վարդապետի «Երևան բաղ եմ արել» և Պերպերյանի գործերեն «Տռ Լավո», «Եփառնում է կովից իշխան Թարուլը», «Մեր նահապարեն» և «Հայոց Համբարձումը»։ Համերգի ընթացքին, որ մեծ ընդունելություն գտավ, բոլոր երգերն ալ առնվեցան սկավառակներու վրա։

Երգահան ղեկավարը համերգին օրը կուռ բանախոսություն մը բրավ Հ. Մ. Բ.-ի ակումբին մեջ, նյութ ունենալով հայ երաժշտությունը և խոր տպավորություն թողուց ներկաներուն վրա։

Հավանական է, որ Պ. Հ. Պերպերյան հայոցիկա շարթու մեկնի լիքանան, որ, ինչպես Հայտնի է, ուսուցչության պաշտոն կվարե և ննիթիկասի դպրելանքին մեջ։ Այսուհանդերձ պաղեսատինահայությունը շախտի մոռնան զինքը և պիտի սպասե զայն վայելու նոր առիթներու։

Գ. ԱՎԱԳՅԱՆ

(«Արամ» 25 հոկտեմբեր 1947 թ.)

## ՕՐ. ՊԱՄՓԻԿՅԱՆ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵԶ

Փոլսին Ամերիկա ժամանած է Հայտնի երգչուհի օր. Արաքսի Պապիկյան, որ ամեննեն սիրված երգչուհին է պոլսահայության։

Ան ծանոթ է Ռումանիու հայության ալ իր սարքած երդահանգեսներով, որոնք մեծ ուգերություն ու շահագրգույածություն առաջ բերած են Հայ և օտար շրջանակներու մեջ։

Օր. Արաքսի Պապիկյան ծանոթ է նաև պոլսահայության իր շնորհալի բանաստեղծուհի, ու հաճույքով կկարդացվին իր գրությունները ամեն առիթով։

Անիկա Լոզանի համալսարանին պսակավորի տիտղոսը կմիացնե Խթաննպովի պետական երաժշտանոցի վկայալ երգությունի

ախտոսին։ Տարիներե ի վեր ձեռնհասությամբ կդասավանդե հայերեն ու ֆրանսերեն լեզուները։

Օր. Պապիկյան աշակերտուհին ըլլալով ողբացյալ Կոմիտասին, բացառիկ հարազատությամբ կմեկնաբանե անոր երգերը։ Հայացի տաքուկ շեշտն ու շոնչը դնելով ամեն մեկ բառին մեջ։

\*\*\*

Վերջին գեղարվեստական եղանակի ընթացքին ամերիկյան բեմերու վրա փայլող աստղերու կարգին հիշատակության արժանի դարձան նաև շատ հայ արվեստագետներ,

որոնցմեն նուեր ձորձորյան մասնավորաբար մեծ հաջողություն ձեռք ձղեց: Այս երիտասարդ սովորանու հայուհին, առաջին առնգամ հայտնություն մը եղավ Սան Ֆրանչիսկոյի Միջազգային շուցահանդեսի երաժշտական շաբթվան ընթացքին, որը հաջողությամբ երևց «Մատամ Պրթլյալայ»-ի և «Աա Պոհմ»-ի մեջ: Նուեր ձորձորյան բեմի իր այս հաղթանակներին հետո սկսավ շաբթ մոն նվազահանդեսներ տալ, որոնց մեջ մասնավոր գործուրանքով մշտեցավ հայկական երգերուն: Այսպես թառն Հոլի մեջ իր տված

ամենավերջին նվագահանգեսի հայտագրին մեջ՝ Պրամսի, Շիորտանիի, Պերկոլեզիի և Հենաբլի Կողման տեղ գրավեց նաև Կոմիտասը (Միքանի ծառ), Գալֆայանը (Կոունի): Սպենդիարյանը (Ա. Վարդ) և Սրբանցայտնը (Ա. Վենիենկո):

Գեղարվեստական հասարակության և բնագատներու անվերապահ գնահատանքին կարժանան նուեր ձորձորյանի այս նվազահանդեսները:

(«Ժողովուրդ» 3 հոկտեմբեր, 1947 թ.)

## ԶԱՄՊԱՔՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՊՈՒԲՐԵՇԻ ՄԵԶ

Մայիս 19-ին Պուբրեշի մեջ բացումը կատարվեց Գր. Զամպաքճյանի թանգարանին ուսմանական իր թանկագին յուղանկարներով, դորս նվիրած է պետության: Ներկա էին սումեն մատավորականությունը, Ռումանիո վարչապետը՝ Տոքթոր Պետրու Գրոզա, Սպատական դեսպան Քավթարաձեն, Խորհրդարանի նախագահ Սատովյանու, սպարապետ Տոմպրովսի և բազմաթիվ դրագեատներ:

Իոն Բած բացման խոսքը արտասանելով՝ ըստ թե Պ. Զամպաքճյան սումեն դեմոկրատական պետության նվիրած է իր նկարներու հավաքածուն, և թե իր ամբողջ կյանքը նվիրած է գեղեցիկին: Խոսք առին նաև որիշներ:

Պատասխանելով բոլորին, Պ. Զամպաքճյան վեր հանեց այն նշանակությունը, որ կներկայացնե մարդկային մշակութիւն համար գեղարվեստական ստեղծագործությունը:

Ի վերջո խոսք առավ վարչապետ Կրոսա, զոր չերմագին շնորհակալություն հայտնեղ Պ. Զամպաքճյանի, իր և կառավարության անունով, և ըստ:

— Դուք, Պ. Զամպաքճյան, երկրին աշխատավորներուն հետ զուղընթաց կերպար և կաշխատիք նոր բնկերության հիմնոր զարցնելու համար:

Հետո Պուբրեշի բաղաքապետը՝ սպարապետ Տոմպրովսի հանդիսականներուն ի դիտություն հայտնեց թե Քաղաքավունությունը, իբր երախտագիտության հայտափեք, որոշած է Պ. Զամպաքճյանի բնակած փողոցը այսուհետեւ անվանել «Մուգեռ Զամպաքճյան» (Զամպաքճյան թանգարան) փողոց: Այս ծանուցումը որոտընդուստ ծափերով բնողությավ:

(«Միուրին» 13 սեպտեմբեր, 1947 թ.)

## ՀԱՅ ԴՐՈՑՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՑԱՆ

Պուկարիս հայ դպրոցները պետականացած ըլլալով, 1946-1947 ուսումնական տարեշրջանի ավարտական կարգերն բարձրացույն նիշ ստացող աշակերտները զերծ պիտի մնան ավարտական քննություններն, ինչպես պետական վարժարաններու մեջնախորդ տարիներուն հայ վարժարան ավարտողները սպովարական կիմնագիները բնունվելու համար քննություն պիտի անցնեն պետական պատվիրակ-քննիչներուն:

Հայ վարժարաններու պետականացումով այս կարգը կշնչվի ալևս:

Ուրիշ կարգադրությամբ մը, պուկար կառավարությունը որոշած է, որ հայ մանուկներու կրթությունն ու դաստիարակությունը պարտավորիչ կերպով տեղի պիտի ունենան հայ դպրոցներու մեջ և այլևս արգիլված է անոնց ֆրանսական, իտալական և այլ օտար վարժարաններ հաճախիլը:

(«Միուրին» 20 սեպտեմբեր 1947 թ.)

## ՆԿԱՐԻՉ ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՋՅԱՆԻ ՄԱՀԾ

Հոկտեմբերի 7-ին Մետքրոտ Մեսսի մեջ մեռած է նշանավոր նկարիչ Արշակ Ֆեթվաճյան, որ կատարաստվեր Հայաստան մեկնելու Ամերիկային ներգաղթողներու ա-

ռաջին քարավանով: Հայրենասեր նկարիչը իր բւլոր գործերը կտակած է Հայաստանի թանգարանին:

(«Կոունի» հոկտեմբեր 10, 1947 թ.)